ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) միջազգային համագործակցության և քաղաքականության մշակման վարչության քաղաքականության մշակման և մեթոդաբանության բաժնի՝ ՏՀԶԿ-ի կողմից կազմակերպված Մրցակցության վերաբերյալ 23-րդ գլոբալ ֆորումին մասնակցելու նպատակով Ֆրանսիայի Հանրապետության քաղաք Փարիզ գործուղման արդյունքների վերաբերյալ

1. Մասնակիցների անուն, ազգանուն և զբաղեցրած պաշտոն.

- Գեղամ Գևորգյան– Հանձնաժողովի նախագահ
- Մարուսյա Միրզոյան – Հանձնաժողովի միջազգային համագործակցության և քաղաքականության մշակման վարչության քաղաքականության մշակման և մեթոդաբանության բաժնի գլխավոր մասնագետ

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Ֆրանսիայի Հանրապետություն, քաղաք Փարիզ, 2024 թվականի դեկտեմբերի 2-ից 3-ը ներառյալ:

3. Գործուղման հիմքը.

ՏՀԶԿ մրցակցային բաժնի պետի տեղակալ Անտոնիո Կապաբիանկոյի կողմից ստացված հրավեր՝ Մրցակցության վերաբերյալ 23-րդ գլոբալ ֆորումին մասնակցելու նպատակով:

4. Գործուղման նպատակը.

ՏՀԶԿ-ի կողմից կազմակերպված Մրցակցության վերաբերյալ 23-րդ գլոբալ ֆորումին մասնակցություն, ինչպես նաև համապատասխան մասնագետների հետ փորձի փոխանակում:

5. Գործուղման արդյունքները.

Մրցակցության վերաբերյալ 23-րդ գլոբալ ֆորումի առաջին հատվածը նվիրված էր մրցակցության և հասարակության անհավասարության հիմնահարցերին: Մասնավորապես՝ նշվածի համատեքստում ներկայացվել է մրցակցության և հասարակության անհավասարության միջև կապը, այն թե որքանով մրցակցային օրենսդրությունը և քաղաքականությունը կարող են նպաստել հասարակության անհավասարության նվազեցմանը: Միաժամանակ, քննարկվել են ազգային մրցակցային օրենսդրությունների և քաղաքականությունների զարգացումները և դրանց ապագա հնարավորությունները:

Ֆորումի երկրորդ հատվածում քննարկվել են անդրսահմանային համակենտրոնացումների հիմնահարցերը, դրանց արդյունքում մրցակցային մարմինների

համար առաջացող նոր մարտահրավերները, այն պատճառները, թե ինչու մրցակցային մարմինները կարող են տարբեր որոշումներ կայացնել միևնույն համակենտրոնացման շրջանակներում, ինչպես նաև այդ գործընթացում միջազգային համագործակցության դերը:

Ֆորումի երրորդ հատվածում անդրադարձ է կատարվել Թաիլանդի Թագավորության մրցակցության օրենսդրության և քաղաքականության ՏՀԶԿ փորձագիտական վերանայման ուսումնասիրությանը, որը հիմնված էր երկրի կողմից իր օրենքները և գործելակերպը գործընկեր երկրների մանրակրկիտ վերանայմանը ենթարկելու ցանկության վրա: Ֆորումի ընթացքում քննարկվել է Թաիլանդի թագավորության ներկա մրցակցային ռեժիմը և դրա արդյունավետությունը: Ուսումնասիրության դիտարկման արդյունքում ներկայացվել են առաջարկություններ՝ Թաիլանդի Թագավորության գործող մրցակցության ռեժիմի և ինստիտուտների ամրապնդման և լավարկման առնչությամբ:

Ֆորումի չորրորդ հատվածում քննարկվել են սննդի մատակարարման շղթայում մրցակցության հիմնահարցերը: Մասնավորապես՝ ներկայացվել են սննդի մատակարարման տարբեր տարրերը և թե ինչպես կարող են կառավարությունների քաղաքականությունը կապված մրցակցության հետ կարող է կարևոր դեր խաղալ շուկայի ձախողումները սահմանափակելու համար:

Գործուղման շրջանակում Հանձնաժողովի նախագահը, ի թիվս այլնի, հանդիպումներ ու քննարկումներ է ունեցել մի շարք պետությունների մրցակցային մարմինների ղեկավարների հետ, որի շրջանակում քննարկվել են ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող մի շարք մրցակցային հարցեր:

6. Առաջարկություններ և գործուղման արդյունքում ձեռք բերված պայմանավորվածություններ

- Մրցակցային մարմինների ղեկավարների հետ ձեռք է բերվել հետագա համագործակցությունը խորացնելու, ուսումնական այցեր, համատեղ սեմինարներ կազմակերպելու, մրցակցային օրենսդրության և քաղաքականության կիրարկման զարգացումների վերաբերյալ փորձի փոխանակման պայմանավորվածություններ:

Միջազգային համագործակցության և քաղաքականության մշակման վարչության քաղաքականության մշակման և մեթոդաբանության բաժնի գլխավոր մասնագետ

Մարուսյա Միրզոյան